



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 21 >> 06 2017թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐԶ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ բուժաշխատողներ

Ի սրտե շնորհավորում եմ մասնագիտական տոնի՝ Բուժաշխատողի օրվա կապակցությամբ: Այս տոնը ևս մեկ առիթ է գնահատելու և կարևորելու ձեր պատվաբեր ու պատասխանատու առաքելությունը: Հայ ժողովուրդը միշտ խորին հարգանքով ու ակնածանքով է վերաբերվել բժշկի մասնագիտությանը:

Մասնագիտական հստություն, արհեստավարժություն, ուշադրություն մարդկանց նկատմամբ և անսահման մարդասիրություն՝ ահա այն կարևոր հատկանիշները, որոնք պետք է ունենա յուրաքանչյուր բուժաշխատող մեր մարզի բնակչության բուժսպասարկումը պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

Միրելի՛ բուժաշխատողներ, Ձեզ է վստահված ամենաթանկը՝ մարդկային կյանքը, որը պարտավորեցնում է միշտ հավատարիմ մնալ մասնագիտական երդմանը՝ բարձր պահելով բժշկի կոչումը:

Մաղթում եմ Ձեզ քաջատղջություն, երջանկություն, մասնագիտական նոր նվաճումներ ու վերելքներ:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ